ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԿԱԶԱ» ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ

ք. Երևան «01» Դեկտեմբերի 2021թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն)՝ ի դեմս նախարար Վահրամ Դումանյանի, և «ԿԱԶԱ» շվեյցարական մարդասիրական հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ)՝ ի դեմս Հիմնադրամի տնօրեն Տաթևիկ Բաղդասարյանի (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր), «ԱՐԵՎ» տեխնոլոգիական ուսուցման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակում տեխնոլոգիական մասնագիտական ուսուցման ձևաչափի զարգացման, ներդրման և հնարավորությունների ընդլայնման նպատակով կնքեցին սույն փոխըմբռնման հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր)՝ հետևյալի մասին.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կողմերը համագործակցում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, կանոնադրական փաստաթղթերով և սույն Հուշագրով սահմանված իրենց իրավասությունների շրջանակում՝ միմյանց համարելով ռազմավարական գործընկերներ և ուղղելով իրենց ջանքերը կրթության և նորարարության ոլորտներում համագործակցության զարգացմանը:

1.2. Կողմերի համագործակցությունը սույն Հուշագրի իրականացման շրջանակում կատարվում է կամավոր հիմունքներով՝ ղեկավարվելով շահերի ընդհանրության, գործողությունների համաձայնեցվածության և կառուցողական համագործակցության սկզբունքներով:

1.3. Կողմերի նպատակն է համագործակցության զարգացումը, ջանքերի միավորումը և համակարգումը հետևյալ հարցերի շուրջ.

- տեխնոլոգիական կրթության (էլեկտրատեխնիկա, էներգետիկա, արդյունաբերական ավտոմատացում (ռոբոտատեխնիկա) և ուսուցման ոլորտի կրթական նախնական

/արհեստագործական/ և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կադրերի վերապատրաստում,

- տեխնոլոգիական կրթության և ուսուցման ոլորտի կրթական նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների վերապատրաստում,
- տեխնոլոգիական կրթության և ուսուցման ոլորտի կրթական նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսումնամեթոդական և նյութատեխնիկական բազայի բարելավում,
- նախնական /արհեստագրոծական/ և միջին մասնագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների և գործատուների հետ համագործակցության ձևավորում և ամրապնդում:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. **Նախարարության պարտականություններն են.**

2.1.1. աջակցել տեխնոլոգիական մասնագիտությունների, մասնավորապես՝ էլեկտրատեխնիկա, էներգետիկա, արդյունաբերական ավտոմատացում (ռոբոտատեխնիկա) գծով մասնագիտական կադրերի և ուսանողների վերապատրաստմանը,

2.1.2. նպաստել Հիմնադրամի և ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացնող ուսումնական հաստատությունների միջև ուղիղ կապերի հաստատման և զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը,

2.1.3. գործընկերական շրջանակներում տարածել ծրագրի և համապատասխան միջոցառումների իրականացման վերաբերյալ տեղեկատվություն,

2.2. **Հիմնադրամի պարտականություններն են.**

2.2.1. աջակցել նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տեխնոլոգիական մասնագիտությունների, մասնավորապես՝ էլեկտրատեխնիկա, էներգետիկա, արդյունաբերական ավտոմատացում (ռոբոտատեխնիկա) գծով մասնագիտական կադրերի և աշակերտների վերապատրաստմանը,

2.2.2. իրականացնել վերապատրաստումներ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների դասավանդողների համար՝ մեկ-երկու շաբաթյա մոդուլային մեթոդաբանությամբ աշխատելու նպատակով,

2.2.3. ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացնող ուսումնական հաստատություններում ուսուցման որակի բարելավման նպատակով ներդնել Հիմնադրամի կողմից մշակված և Նախարարության կողմից երաշխավորված ուսումնամեթոդական բազան,

2.2.4. օժանդակել կրթության և տնտեսության համապատասխան ոլորտը ներկայացնող մասնավոր կազմակերպությունների հետ համագործակցության ամրապնդմանը՝ խթանելով գործատուների ակտիվ ներգրավումը կրթական գործընթացներում՝ ուսանողների գործնական աշխատանքները վերջիններիս մոտ կազմակերպելու միջոցով,

2.2.5. օժանդակել երիտասարդների աշխատաշուկա մուտք գործելուն՝ ապահովելով գործող աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան մասնագիտական բարձր որակավորման կարճաժամկետ վերապատրաստումներ, ինչպես նաև ուղղորդելով վերջիններիս դեպի տվյալ ոլորտում գործող կազմակերպություններ:

3. ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

3.1. Սույն Հուշագիրը ուժի մեջ կմտնի ստորագրման օրվանից՝ 5 տարի ժամկետով: Ժամկետի ավարտին Կողմերը կարող են վերանայել սույն Հուշագիրը և համագործակցությունը շարունակելու և համագործակցության ժամկետը երկարացնելու որոշում կայացնել:

3.2. Կողմերը կարող են դադարեցնել սույն Հուշագիրը՝ ծանուցելով մյուս Կողմին այդ մտադրության մասին գրավոր 30 (երեսուն) օր առաջ:

3.3. Կողմերը կարող են փոփոխել կամ լրացնել սույն Հուշագիրը: Սույն Հուշագրում ցանկացած փոփոխություն, գործողության ժամկետի երկարացում կամ լրացում պետք է կատարվի գրավոր և վավերացվի երկու Կողմերի միջև:

4. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1. Կողմերը համագործակցում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ հիմնվելով փոխադարձ հարգանքի, հավասար իրավունքների, գործընկերության սկզբունքների վրա:

4.2. »Սույն Հուշագիրը չի ազդում Կողմերի մասնակցությամբ այլ պայմանագրերից բխող Կողմերից յուրաքանչյուրի իրավունքների և պարտականությունների վրա և Կողմերի միջև չի առաջացնում որևէ գույքային և/կամ ֆինանսական պարտականություն:

4.3. Սույն Հուշագրի շրջանակում կողմերի քաղաքացիաիրավական գործարքի բնույթ կրող փոխհարաբերությունները (փոխհաշվարկները) միմյանց միջև և /կամ երրորդ անձանց հետ պետք է ձևակերպած լինեն առանձին պայմանագրերով՝ ՀՀ գործող օրենսդրության համաձայն:

4.4. Հուշագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է Հուշագրի մեկ օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ	«ԿԱՋԱ» ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ	ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏՆՕՐԵՆ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ	ՏԱԹԵՎԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ	